

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-10-4-Ա

ք. Երևան

20.10.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի հոկտեմբերի 20-ի նիստում քննարկեց 2022 թվականի օգոստոսի 31-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ OLIMP LABORATORIES Sp. z o.o. ընկերության (Pustynia 84F PL-39-200 Dębica, PL) «OLIMP SPORT NUTRITION» (IR967714) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «OLYMPIC», «THE OLYMPICS», «OLYMPIAN»(Comité International Olympique Château de Vidy CH-1007 Lausanne (CH) IR 787298, 1056066, 1128501) բառային ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները ունեն ձայնային

նմանություն և զուգորդվում են իրենց սկզբնամասով՝ «օլիմպ» համընկնող տարրով: Անդրադառնալով կրկնական փորձաքննություն խնդրարկելու մասին դիմումում նշված այն փաստին, որ «SPORT NUTRITION» արտահայտությունը բացառում է սպառողների կողմից մոլորության մեջ ընկնելու հնարավորությունը, ապա հարկ ենք համարում նշել, որ ապրանքային նշանում «SPORT NUTRITION» (սպորտային սնունդ) արտահայտության առկայությունը ավելի է ընդգծում այդ նշանով մակնշված ապրանքների կապը սպորտային ոլորտին, հետևաբար հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգը միանգամայն հավանական է:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «OLYMPIC», «THE OLYMPICS», «OLYMPIAN»(Comité International Olympique Château de Vidy CH-1007 Lausanne (CH) IR 787298, 1056066, 1128501) բառային ապրանքային նշանների առկայության պատճառով:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված OLIMP LABORATORIES Sp. z o.o. ընկերության «OLIMP SPORT NUTRITION» (IR967714) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ